ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Կանաչ կիսաբրդյա գործվածքից է, երանգը՝ համաձայնեցվում է Գնորդի հետ: Սվիտերը կլոր վզով: Կրծքամասի ձախ հատվածում՝ կպչուն կափույրով արտաքին գրպան: Ուսադիրների շրջանը կրկնակարված է կանաչ սինթետիկ կտորով՝ վրան կպչուն ուսադիրների ամրակներ: Գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Սվիտերի թևքերը, գոտին և վիզն էլաստիկ գործվածքով են: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում: ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2022թ.-ի ընթացքում անհրաժեշտ քրեակատարողական ծառայողների հանդերձանքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Ընդհանուր պայմաններ՝ 1. Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը կիսաձվաձև է, բարձրությունը՝ 100 մմ, լայնությունը՝ 78 մմ, Վաճառողի կողմից կարվում է բոլոր ձմեռային կիսաբրդյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, սվիտերների և շապիկների ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև: Խորհրդանշանի վրա պատկերված են

		ոսկեգույն վահան, թուր, Հայաստանի Հանրապետության զինանշանը, դրոշը և կշեռք: Վահանի վերևում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» (Նկար 4): 2. Քրեակատարողական ծառայության պետի և տեղակալների (5 ծառայողներ) բոլոր ձմեռային կիսաբրդյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, սվիտերների և շապիկների աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, Վաճառողի կողմից կարվում է նաև 100 մմ բարձրությամբ և 78 մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (Նկար 5): 3. Գնորդի պահանջով հանդերձանքի ընդհանուր քանակի մինչև 10%-ի չափով Վաճառողը պարտավոր է կատարել անհատական չափսերի վերցնում և անհատական կար: 4. Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, նմուշը համաձայնեցնելուց հետո Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը, որից հետո կմատակարարվեն ապրանքները: 5. Բոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում և փաթեթավորում: Փաթեթավորման պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և հաշվին: 6. Անհրաժեշտության դեպքում՝ Գնորդի պահանջով, Վաճառողը պարտավոր է, իր միջոցների հաշվին, մատակարարված ապրանքի խմբաքանակը, ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր հետազոտական կենտրոններից մեկում, ենթարկել լաբորատոր փորձարկման՝ ապրանքի որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
11		